

## **Հաճախորդներ. Ի՞նչ սպասել**

Մենք ուզում ենք, որ դուք իմանաք, որ ձեր առողջությունը և անվտանգությունը առաջնային է մեր գործակալության համար: Մենք որոշակի կանոններ ենք տեղադրել, որպեսզի օգնենք պաշտպանել ձեր անձնական եւ նաև մեր աշխատակազմի առողջությունն ու անվտանգությունը: Մենք հետևում ենք տեղական, նահանգային և դաշնային (federal) առաջարկություններին, թե ինչպես ապահով կերպով ծառայել մեր հաճախորդներին: Հաշվի առնելով դա՝ մենք ուզում էինք որոշակի տեղեկություններ տալ այն մասին, թե ինչ կարելի է ակնկալել ձեր ժամադրության համար:

### **Եթե դուք հիվանդ եք**

Եթե կլինիկայում նշանակաժամադրություն ունեք, խնդրում ենք զանգահարել և զգուշացնել անձնակազմին ժամադրությունից առաջ, եթե մրսածողության կամ գրիպի նման ախտանիշեր ունեք կամ COVID-19 դրական ախտանիշ ունեցող անձի հետ սերտ կապ եք ունեցել (6 ոտնաչափի ընթացքում առնվազն 10 րոպե), վերջին 14 օրվա ընթացքում ԿԱՄ եթե վերջին 10 օրվա ընթացքում ունեցել եք հետևյալ ախտանիշներից որևէ մեկը.

1. 100,4 կամ ավելի բարձր ջերմություն
2. Հազ
3. Շնչառության դժվարություն
4. Հիվանդության ցանկացած նոր սկիզբ

Մենք կձեռնարկենք անհրաժեշտ նախազգուշական միջոցներ՝ ժամադրության անվտանգությունն ապահովելու համար, որը կարող է ներառել ձեր ժամադրությունը վերաձևակերպել, ձեզ հետ հեռախոսային / վիդեո հանդիպում կամ ճիշտ անհատական պաշտպանական սարքավորումները (PPE) կօգտագործեն, եթե կլինիկորեն տեղում անձամբ ժամադրությունը անհրաժեշտ է:

### **Վերջին ճանապարհորդություն**

Եթե կլինիկայում ունեք նշանակված ժամադրություն, խնդրում ենք զանգահարել և զգուշացնել անձնակազմին նախքան ժամադրությունը, եթե վերջին 14 օրվա ընթացքում ճանապարհորդել եք երկրից դուրս կամ ինքնաթիռով եք ճանապարհորդել: Մենք կձեռնարկենք անհրաժեշտ նախազգուշական միջոցներ՝ ժամադրության անվտանգությունն ապահովելու համար, որը կարող է ներառել ձեր ժամադրությունը վերաձևակերպել, ձեզ հետ հեռախոսային / վիդեո ժամադրություն կամ ճիշտ անհատական պաշտպանական սարքավորումներ (PPE) կօգտագործեն, եթե տեղում անձամբ ժամադրությունը կլինիկորեն անհրաժեշտ է:

## **Ստուգվելու գործընթացը**

- Մենք լրացուցիչ նախազգուշական միջոցներ ենք ձեռնարկում՝ օգնելու ապահովել ձեր առողջությունն ու անվտանգությունը, ինչպես նաև մեր աշխատակազմի առողջությունն ու անվտանգությունը: Բոլոր հաճախորդները ստուգվելու են, երբ նրանք կը գան կլինիկա իրենց նշանակված ժաշադրության համար: Ձեզանից կխնդրեն օգտագործել ձեռքի մաքրող միջոց, ձեր բերանի և քթի վրայով վիրաբուժական դիմակ կրել և ջերմաստիճանը ստուգել: Եթե չունեք վիրաբուժական դիմակ, մենք ձեզ կտրամադրենք այն: Ձեզ կտրվեն հարցեր՝ COVID-19- ի հետ կապված ախտանիշները կամ ազդեցությունները ստուգելու համար:

- Ցանկացած մարդ, ով ունի 100.4 կամ ավելի բարձր ջերմություն կամ ով դրականորեն է պատասխանում ցուցադրման ցանկացած հարցի, կուղարկվի տուն: Բացառություններ կարող են լինել այն ժամադրությունները, որոնք կլինեն տեղում, ըստ կլինիկական անհրաժեշտության: Եթե ձեր ժամադրությունը տեղում շարունակվի, ձեզ կտեղափոխեն նշանակված մեկուսարան: Դրանից հետո ձեզ կտեսնեն հեռուստաբժշկության կամ անձամբ ձեր բուժող անձնակազմի հետ, որը լիարժեք PPE- ով է հագնված:

## **Դիմակներ**

- Ձեր և ուրիշների առողջությունը պաշտպանելու համար մեր աշխատանքային կանոնն է, որ 2 տարեկանից բարձր բոլոր հաճախորդները, աշխատակազմը և շենք մուտք գործող այլ անձինք կրեն վիրաբուժական դիմակներ:

## **Սպասասրահ**

- Ցանկացած պահի սպասասրահում կարող են թույլատրվել միայն սահմանափակ թվով անձանց: Այդ պատճառով կարող են լինել պահեր, երբ ձեզանից կխնդրեն սպասել դրսում կամ ձեր ավտոմեքենայում մինչև ձեր ժամադրության նշանակված ժամանակը:
- Այն իրավիճակներում, երբ սպասասրահում տեղ կա սոցիալական հեռավորությունը պահպանելու համար, ձեզ չի թույլատրվում սպասասրահ մտնել մինչ ձեր նշանակված ժամադրությունից 15 րոպե առաջ: Սա նշանակում է, որ եթե շուտ եք ներկայանում ձեր ժամադրությանը, ձեզանից կխնդրեն սպասել դրսում:
- Սոցիալական հեռավորությունը պահպանելու համար հաճախորդներին ժամադրությունից հետո արգելվում է սպասասրահում մնալ: Խնդրում ենք ունենալ համապատասխան պայմանավորվածություններ:

- Բոլոր հաճախորդներից պահանջվում է պահպանել միմյանցից սոցիալական հեռավորությունը առնվազն 8 ոտնաչափ հեռավորությամբ:

### **Մաքրման Կանոններ**

Առողջության և անվտանգության պահպանմանը աջակցելու համար մենք իրականացնում ենք մաքրման հատուկ կանոններ, ներառյալ, բայց չսահմանափակված հետևյալով.

- Սպասասրահի բոլոր աթոռները պլաստիկ կլինեն և պարբերաբար մաքրվելու են կամ ախտահանող հեղուկացիրով (spray) և թղթե սրբիչով կամ ախտահանող անձեռոցիկով:
- Բոլոր ամսագրերը և ավելորդ նյութերը կհեռացվեն սպասասրահից:
- Բուժման սենյակների աթոռները պետք է լինեն առնվազն 8 ոտքաչափ հեռավորության վրա՝ սոցիալական ճիշտ հեռավորությունը պահպանելու համար:
- Կլինիկայի սենյակների աթոռները պլաստիկ կլինեն և աշխատողները մաքրելու են կամ ախտահանող հեղուկացիրով և թղթե սրբիչով կամ ախտահանման անձեռոցիկներով՝ յուրաքանչյուր օգտագործումից հետո և յուրաքանչյուր հերթափոխի վերջում:
- Ավելորդ իրերը (օրինակ՝ ամսագրեր, գրքեր) ներկայումս հանվում են յուրաքանչյուր գրասենյակային տարածքից:
- Խաղալիքները պահվում են սվազագույնը միայն կլինիկական օգտագործման համար և մաքրվում են յուրաքանչյուր օգտագործումից հետո:
- Կլինիկական սենյակներում մակերևույթները (օր.՝ աթոռ, սեղան) սրբվում են յուրաքանչյուր օգտագործելուց հետո, կամ ախտահանիչ հեղուկացիրով և թղթե սրբիչով կամ ախտահանիչ անձեռոցիկներով:
- Կլինիկաները մասնագիտորեն մաքրվելու են ամեն գիշեր:

### **Ձեր Ժամադրությունը**

Սա այն է, ինչ կարող եք ակնկալել, երբ տեղում եք գտնվում մեր կլինիկաներից մեկում.

- Քանի դեռ նախնական պայմանավորվածություններ չեն որոշվել, դուք կտեսնեք ձեր բուժող անձնակազմին հեռուստաբժշկության միջոցով, նույնիսկ այն ժամանակ, երբ տեղում եք:
- Եթե կլինիկական անհրաժեշտություն ունենա անձամբ այցելությունը, և դուք, և ձեր բուժող անձնակազմը վիրաբուժական դիմակներ կունենաք ձեր բերանի և քթի վրայ:

- Համապատասխան սոցիալական հեռավորությունը պահպանելու համար այս պահին չի թույլատրվում այնպիսի փոխազդեցություններ, ինչպիսիք են գրկելը կամ ձեռք սեղմելը:
- Երեխաների ծնողների համար. խնդրում ենք պատրաստեք ձեր երեխաներին և տեղեկացրեք նրանց, որ մենք չենք կարողանալ բարեւել ձեր երեխային այնպես, ինչպես սովոր ենք (օր. գրկել, ձեռք սեղմել, high five) և երբ մենք հանդիպենք, անհրաժեշտ պետք է նրանցից առնվազն 8 ոտնաչափ հեռավորություն պահպանենք:

### **Այցելողներ**

- Սոցիալական հեռավորությունն ապահովելու համար մենք մեր կլինիկաներում այցելուների թիվը հասցնում ենք նվազագույնի: Եթե ձեզ անհրաժեշտ է, որ ինչ-որ մեկը ուղեկցի ձեզ ձեր ժամադրությանը, խնդրում ենք ժամանակից շուտ տեղեկացնել ձեր բուժող անձնակազմին և քննարկել այդ հարցը նրանց հետ: Ձեր այցելողը պետք է հաստատվի բուժող անձնակազմի կողմից նախքան ձեր նշանակված ժամադրության օր/ժամ -ը: